Հավելված N 1
ՀՀ կառավարության 2018 թվականի
մարտի 29-ի N 355 - Ն որոշման

«Հավելված N 8
ՀՀ կառավարության 2004 թվականի
մարտի 4-ի N 318 - Ն որոշման

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

| NN ը/կ | Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով ստոմատոլոգիական ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբեր | Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող ստոմատոլոգիական ծառայություններ | Ծառայությունների փոխահատուցման ձևը (անվճար կամ արտոնյալ**) |
|---|---|---|---|
| 1. | Ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված՝ 35.01 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող նպաստառուներ | ատամի հեռացում | անվճար |
| | | պուլպիտ | անվճար |
| | | պերիոդոնտիտ | անվճար |
| | | մասնակի շարժական թիթեղյա պրոթեզ (յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ)* | անվճար |
| | | լրիվ շարժական թիթեղյա պրոթեզ (յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ)* | անվճար |
| 2. | Ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված՝ 30.01-35.00 անապահովության միավոր ունեցող մինչև 18 տարեկան երեխաներ *** և 65 տարեկան ու ավելի բարձր տարիքի անձինք | ատամի հեռացում | անվճար |
| | | պուլպիտ | անվճար |
| | | պերիոդոնտիտ | անվճար |
| | | մասնակի շարժական թիթեղյա պրոթեզ (յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ)* | անվճար |
| | | լրիվ շարժական թիթեղյա պրոթեզ (յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ)* | անվճար |
| 3. | Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբեր (բացառությամբ սույն հավելվածի 1-ին և 2-րդ կետերի և ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետում ընդգրկված խմբի) | ատամի հեռացում | անվճար |
| | | պուլպիտ | արտոնյալ |
| | | պերիոդոնտիտ | արտոնյալ |
| | | մասնակի շարժական թիթեղյա պրոթեզ (յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ)* | արտոնյալ |
| | | լրիվ շարժական թիթեղյա պրոթեզ (յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ)* | արտոնյալ |

* Երեք տարվա սահմանափակման սկիզբը հաշվարկվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո մատուցված ծառայությունների համար:

** Արտոնյալ պայմաններով մատուցվող ստոմատոլոգիական ծառայությունների՝ պետության մասնակցության մասը կազմում է ընդհանուր գնի 65 տոկոսը, իսկ շահառուի կողմից վճարվող համավճարի չափը՝ ընդհանուր գնի 35 տոկոսը:

*** Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված մինչև 18 տարեկան երեխաների ատամների կարիեսը բուժվում է անվճար:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

18_0355

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թվականի
մարտի 29-ի N 355 - Ն որոշման

«Հավելված N 9
ՀՀ կառավարության 2004 թվականի
մարտի 4-ի N 318 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## 12 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրով նախատեսված ծառայությունները տրամադրվում են 12 տարեկան կամ 7-րդ դասարանում սովորող երեխաներին, յուրաքանչյուր երեխային՝ մեկ անգամ:

3. Ծրագիրն իրականացվում է հանրակրթական ուսումնական հաստատության, իսկ անհնարինության դեպքում՝ առողջության առաջնային պահպանում իրականացնող բժշկական կազմակերպության միջոցով:

4. Ծրագրի իրականացման վերաբերյալ նախապես տեղեկացվում է հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարը, իսկ գյուղական համայնքներում՝ նաև բժշկական ամբուլատորիաների և բուժակ-մանկաբարձական կետերի պատասխանատուները, ովքեր մինչև ծրագրի իրականացումը կազմում են 12 տարեկան կամ 7-րդ դասարանում սովորող երեխաների ցուցակ:

5. Ծրագիրն իրականացվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ արտագնա մասնագիտական խմբի միջոցով՝ ծրագիրն իրականացնող բժշկական կազմակերպության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան:

6. Ծրագիրն իրականացվում է համապատասխան որակավորում և մասնագիտացում ունեցող բժիշկ-ստոմատոլոգի կողմից:

7. Ծրագրի իրականացման ընթացակարգը ներառում է՝

1) երեխայի ստոմատոլոգիական կարգավիճակի գնահատումը.

2) ատամնաշարի մշակումը ֆտոր պարունակող մածուկով՝ բացառությամբ ֆլյուորոզ հիվանդությամբ տառապող երեխաների.

3) երեխայի բերանի խոռոչի հիգիենայի վերաբերյալ խորհրդատվության ապահովումը (երեխայի օրինական ներկայացուցչին, երեխային).

4) ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման (թերապևտիկ կամ վիրաբուժական բուժում, ատամնապրոթեզավորում և այլն) կարիք ունեցող երեխաների ուղղորդումն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն՝ երեխայի օրինական ներկայացուցչին (դպրոցական, առողջության առաջնային պահպանում իրականացնող բուժքույրերի կամ հեռախոսակապի միջոցով) տրամադրելով տեղեկատվություն պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների մասին.

5) ստոմատոլոգիական քարտում տվյալների լրացումը և դրանց մուտքագրումն էլեկտրոնային առողջապահության համակարգում:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ